# ՀԱՅԱՍՏԱՆ
# STEPS ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, 2016
# ԾԽԱԽՈՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ԱՀԿ STEPS հետազոտությունը ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) ռիսկի գործոնների (ՌԳ) վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և հրապարակման ստանդարտացված մեթոդ է: Գործիքի օգնությամբ հավաքագրվում են տվյալներ ՌԳ-ի գնահատման և ՈՎՀ-ի վերաբերյալ, որոնցով պայմանավորված է ՈՎՀ բեռը: Դրանց թվում են ծխախոտի օգտագործումը, ալկոհոլի վնասակար չարաշահումը, անառողջ սնունդը, անբավարար ֆիզիկական ակտիվությունը, մարմնի ավելցուկային քաշը և ճարպակալումը, զարկերակային բարձր ճնշումը և արյան մեջ քոլեսթերինի և գլյուկոզի բարձր մակարդակները, աղի օգտագործման օրական չափաքանակը:

STEPS հետազոտության տվյալները կարող են օգտագործվել երկրների կողմից՝ առանձին ՌԳ-ի նվազեցմանն ուղղված գլոբալ նպատակների իրականացման մոնիթորինգի նպատակով: STEPS հետազոտության ծխախոտի օգտագործման ցուցանիշները կարող են օգտագործվել ծխախոտի դեմ պայքարի գործող քաղաքականությունները, ծրագրերը գնահատելու և վերահսկելու նպատակով:*

ՀՀ-ում ՈՎՀ-ի ռիսկի գործոնների STEPS հետազոտությունն անցկացվել է 2016թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում: Հետազոտությունն անցկացվել է 18-69 տարեկան բնակչության շրջանում: Տվյալ տարիքային խմբի համար ներկայացուցչական տվյալներ ստանալու նպատակով կիրառվել է կլաստերային ընտրանք: Հետազոտության աշխատանքներն իրականացվել և համակարգվել են ԱՀԿ-ի և ՀՀ ԱՆ ակադ. Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից: Հարցմանը մասնակցել է ընդհանուր թվով 2349 մարդ:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐ

### ԾԽԱԽՈՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Տղամարդկանց 51.5%, կանանց 1.8%, հարցվածների ընդամենը 27.8% ներկայում օգտագործում են ծխախոտ:
- Տղամարդկանց 0.5%, կանանց 0.0% և ընդամենը 0.2% ներկայում օգտագործում են անծուխ ծխախոտ:

### ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

- Տասից 4-ը լսել կամ տեսել են հակածխախոտային տեղեկատվություն հեռուստատեսությամբ կամ ռադիոյով:
- Ներկայում ծխող 10 մարդուց 3-ը մտածել են ծխելը դադարեցնելու մասին՝ ծխախոտի տուփի վրա փակցված նախազգուշացման տեքստը կարդալուց հետո:
- Տասից 2-ը տեսել են ծխախոտի իրացման/խրախուսման միջոցառում ծխախոտի վաճառքի կետում:
- Տասից 1-ը տեսել է ծխախոտի խրախուսմանն ուղղված միջոցառումներ:

### ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

- Ներկայում ծխախոտ օգտագործող տասից 3-ը փորձել են դադարեցնել ծխելը վերջին 12 ամիսների ընթացքում:
- Ներկայում ծխախոտ օգտագործող տասից 3-ը ծխելը դադարեցնելու վերաբերյալ խորհրդատվություն են ստացել բուժաշխատողի կողմից վերջին 12 ամիսների ընթացքում:

### ԾԽԱԽՈՏԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԾՈՒԽ

- 26.6%-ը ենթարկվում է ծխախոտի երկրորդային ծխի ազդեցությանը աշխատավայրում:
- 56.4%-ը ենթարկվում է ծխախոտի երկրորդային ծխի ազդեցությանը տանը:

### ԷԿՈՆՈՄԻԿԱ

Գործարանային արտադրության ծխախոտի իրացման միջին ամսական ծախսը կազմում է 15,460 ՀՀ դրամ:

**Այս տեղեկանքում ներկայացված տվյալները վերաբերում են միայն ծխախոտի օգտագործման առանձին ցուցանիշների: Հետազոտության շրջանակներում հավաքագրված ծխախոտի օգտագործման կամ ՈՎՀ-ի այլ ռիսկի գործոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տես ստորև աղբյուրները:**

*Ծխախոտի օգտագործման վերաբերյալ հարցերը վերցվել են՝ Հարցումների անցկացման նպատակով ծխախոտի օգտագործման վերաբերյալ հարցաշարից (TQS): http://www.who.int/tobacco/publications/surveillance/tqs/en/

| 18-69 տարեկանների արդյունքներ | Ընդամենը % (95% ՎԻ) | Տղամարդ % (95% ՎԻ) | Կին % (95% ՎԻ) |
|---|---|---|---|
| **Ծխախոտի օգտագործում** | | | |
| Ներկայում ծխախոտ օգտագործողներ (ծխով և/կամ անծուխ)[1] | | | |
| Ներկայում ծխախոտ օգտագործողներ | **28.0 (25.3–30.6)** | **51.7 (47.5– 55.8)** | **1.8 (1.1– 2.5)** |
| Ներկայում ամեն օր ծխախոտ օգտագործողներ | **26.9 (24.4–29.5)** | **49.9 (45.7–54.1)** | **1.6 (1.0–2.3)** |
| Ներկայում ծխախոտի օգտագործում | | | |
| Ներկայում ծխախոտ օգտագործողներ | **27.9 (25.2–30.5)** | **51.5 (47.3–55.6)** | **1.8 (1.1–2.5)** |
| Ներկայում գլանակներ ծխողներ[2] | **26.2 (23.6–28.7)** | **48.5 (44.4–52.7)** | **1.7 (1.0–2.3)** |
| Ներկայում ամենօր ծխախոտ օգտագործողներ | **26.9 (24.4–29.4)** | **49.9 (45.7–54.1)** | **1.6 (1.0–2.3)** |
| Ներկայում ամեն օր գլանակ ծխողներ[2] | **25.3 (22.8–27.7)** | **46.8 (42.5–51.2)** | **1.6 (0.9–2.1)** |
| Ծխելն սկսելու միջին տարիքը (քանի տարեկանում) | **18.1 (17.7–18.5)** | **17.9 (17.5–18.3)** | **26.2 (22.1–29.4)** |
| Օրական օգտագործվող գլանակների միջին թիվը (ամեն օր ծխողների շրջանում) | **24.4 (23.1–25.7)** | **24.6 (23.3–26.0)** | **17.4 (11.7–23.0)** |

1.Ծխողներ՝ծխախոտի ամենօրյա կամ ավելի հաճախակի օգտագործում:
2.Գործարանային արտադրության ծխախոտի գլանակներ և ձեռքով փաթաթված գլանակներ: Տեղայնացված է տվյալ երկրում կիրառվող ծխախոտային արտադրանքի այլ տեսակներին:

# ՀԱՅԱՍՏԱՆ
# STEPS ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, 2016
# ԾԽԱԽՈՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

| 18-69 տարեկանների արդյունքներ | Ընդամենը % (95% ՎԻ) | Տղամարդ % (95% ՎԻ) | Կին % (95% ՎԻ) |
|---|---|---|---|
| Ներկայում ծխախոտ չօգտագործողներ (ծխող և/կամ անծուխ)[1] | | | |
| Նախկինում ծխախոտ օգտագործածներ[3] | **7.9 (6.2–9.5)** | **14.2 (11.1–17.3)** | **0.9 (0.4–1.4)** |
| Նախկինում ծխախոտ ծխողներ[4] | **7.7 (6.1–9.3)** | **14.0 (10.9–17.1)** | **0.8 (0.3–1.2)** |
| Երբեք չեն օգտագործել | **64.2 (61.5–66.8)** | **34.1 (30.0–38.2)** | **97.3 (96.4–98.2)** |
| Ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը | | | |
| Տանը ծխախոտի երկրորդային ծխի ազդեցությանը ենթարկվող չափահասներ* | **56.4 (52.2–60.5)** | **58.4 (52.3–64.5)** | **54.1 (50.4–57.8)** |
| Աշխատավայրում փակ տարածքում ծխախոտի երկրորդային ծխի ազդեցությանը ենթարկվող չափահասներ* | **26.6 (22.5–30.7)** | **31.8 (25.4–38.2)** | **20.6 (16.7–24.5)** |
| Ծխելը դադարեցնողներ | | | |
| Ներկայում ծխողներ, ովքեր փորձել են ծխելը դադարեցնել անցած 12 ամսվա ընթացքում | **34.5 (29.2–39.7)** | **34.0 (28.6–39.4)** | **47.8 (27.9–67.6)** |
| Ներկայում ծխողներ, ում բուժաշխատողը խորհուրդ է տվել ծխելը դադարեցնել անցած 12 ամսվա ընթացքում[5] | **29.5 (22.7–36.3)** | **29.2 (22.3–36.2)** | **39.0 (14.5–63.5)** |
| Առողջության համար վնասակարության մասին նախազգուշացումներ | | | |
| Ներկայում ծխողներ, ովքեր մտածել են  ծխելը դադարեցնելու մասին՝ ծխախոտի տուփի վրա փակցված նախազգուշացումը կարդալուց հետո* | **28.3 (21.9–34.7)** | **28.4 (21.8–35.1)** | **22.1 (6.9–37.3)** |
| Չափահասներ, ովքեր տեսել են հակածխախոտային տեղեկատվություն հեռուստատեսությամբ* | **42.7 (39.2–46.1)** | **41.5 (36.5–46.6)** | **43.9 (40.2–47.6)** |
| Չափահասներ, ովքեր լսել են հակածխախոտային տեղեկատվություն ռադիոյով* | **8.9 (6.2–11.2)** | **10.6 (6.0–15.2)** | **6.9 (4.9–8.8)** |
| Չափահասներ, ովքեր տեսել են հակածխախոտային տեղեկատվություն թերթերում կամ ամսագրերում* | **24.9 (21.9–27.8)** | **23.8 (19.3–28.3)** | **26.0 (23.0–28.9)** |
| Ծխախոտի գովազդ կամ խրախուսում | | | |
| Չափահասներ, ովքեր ականատես են եղել ծխախոտի իրացման միջոցառումների դրանց վաճառքի կետերում* | **16.0 (12.9–19.0)** | **18.4 (13.0–23.7)** | **13.3 (11.0–15.6)** |
| Չափահասներ, ովքեր ականատես են եղել ծխախոտի խրախուսման որևէ միջոցառման* | **14.0 (11.2–16.7)** | **20.0 (15.2–24.7)** | **7.1 (5.4–8.8)** |

| Էկոնոմիկա | Տեղական արժույթով (ՀՀ դրամ) |
|---|---|
| Գործարանային արտադրության 20 գլանակի վրա միջինում ծախսված գումարը | **449.8(375.0–524.6)** |
| Գործարանային արտադրության ծխախոտի վրա միջինում ծախսված գումարը | **15460.0(12371.1–18548.8)** |
| Գործարանային արտադրության գլանակների 100 տուփի վրա կատարված ծախսը՝ որպես մեկ մարդու հաշվով ՀՆԱ տոկոսը (2016)[6] | **2.5%** |

1.Ծխողներ՝ծխախոտի ամենօրյա կամ ավելի հաճախակի օգտագործում:
3.Ներկայում չօգտագործողներ:
4.Ներկայում չծխողներ:
5.Նրանց թվում, ովքեր օգտվել են բուժաշխատողի խորհրդատվությունից՝վերջին 12 ամսվա ընթացքում:
6. (ԱՎԾ, 2016թ):
* Վերջին 30 օրվա ընթացքում:

- Խրախուսման միջոցառումներից են՝ ծխախոտի նմուշների անվճար տրամադրումը, ծխախոտի ինքնարժեքով վաճառքը, ծխախոտի կտրոնների տրամադրումը, ծխախոտ գնելու դեպքում նվերներ տալը, ծխախոտի ապրանքանիշով կամ խորհրդանիշով հագուստի կամ այլ ապրանքների խրախուսումը փոստով:
- Հետազոտության շրջանակում չափահաս են համարվել 18-69 տարեկան անձինք:
- Տվյալները կշռվել են՝ հանրապետության տարածքում 18-69 տարեկան բոլոր կանանց և տղամարդկանց համար ներկայացուցչական լինելու նպատակով:
- Հետազոտության համար խորհրդատվական օգնություն ցուցաբերվել է ԱՀԿ-իկողմից:


**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել**
**ՀՀ-ում STEPS հետազոտության համակարգողներին՝**
**Ալեքսանդր Բազարչյան (info@nih.am)**
**Ծաղիկ Վարդանյան (tvardanyan@moh.am)**
**Դիանա Անդրեասյան (dandreasyan@nih.am)**